## *26. Արտոնագրային գործունեություն[*]*

2002թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

*26.4. Ոլորտին վերաբերող հրապարակումներ:* 2002թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար: Տեղեկագրերը հրատարակվել են հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 150 գյուտի, 19 օգտակար մոդելի, 10 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 797 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին: Գյուտի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

[*] *Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալությունը:*